



32. ԲԱՅԼՈՒԿԻ ԴԱՍԱՍԴԵՆ ԽՐԵՔ ԽՈՄԿԸ

Մին թաքավըեր ա ինում, տրան էլ մին շատ խըելումք վեղիր
ա ինձնար, օղում ա հնդան թաքավըերեն փորցի, թաքավըերն էլ
տրան մին վըեխճար ա ինում տուված, վըեր հիբը օպըն, պիտի
տա հնդան:

Մին օր վեղիրը թաքավըերեն յոր ա օնում, վըեր քիինան շռու
կլա, քյինամ ըն տըեսնում իրեք ուրքուր անա ճոկվող հողցեն դրա-
զեն թահչլուկի Դանանդան¹ իրեք վըեղու կյանտանկ թումր ըրած,
կոխկեն նըստած: Հըրցնում ըն, թա էս հինչ վըե՞ղու թումրըեր ըն,
թահչլուկի Դանանդան թա՝ սահանց ամմըեն մինը մին խոսկ ա,
մինը մին վըեսկե աժի, հախըս տուվըերէ, ասըեմ: Վեղիրը տուս ա
օնում մին վըեսկե տամ, թահչլուկն ասում ա.—էս վըեղեն թումրը
էն մարթին կըլիսն, վըեր թազզան հըրուստացած մարթին անա
փող պարտկ կանըի: Մին վըեսկե յէլ տամ ա, թա էս մին վըե-
զեն թումրն էլ էն մարթին կըլիսն, վըեր ուրքան կնգանը սրտեն
սիրը նան սեկըետը կասե: Մին վըեսկե յէլ վըեր տամ ա, Դանան-
դան ասում ա.—էս մին վըեզեն թումրն էլ էն մարթին կըլիսն,
վըեր ուրքան խազայինին անավ ըրիսւին կըկենա:

¹ Աբարտկան խոլիֆի գծառ եղբայրը: Դժգուհի էր եղբար զաժանալիւն-
ներից (Պ. Ա.):

Անց ըն կենում, քյինամ: Վեզիրը մին քանի օրան ետք մին թաղղան հըրուստացած մարթու անա հանրէնը մանեթ փող ա յոր օնում, ասում.—Մին ամսան ետք քեզ կըտամ: Ստնան էլ քյինամ ա կնդան ասում.—Փիս, մըսու պակաս տարե յա, հինչ կինչ, վրեր պիրինք թաքավըերեն վըեխնարը մորթենք, օտրենք: Կնեղյը թա՛ լավ կինի, էսքան տարե թաքավըերեն քշտին ծառայում ըս, մին վըխնարու խաթիր էլ շօնըն:

Վեզիրը քյինամ ա թաքավըերեն վըեխնարըն մնան մին վըեխնար փըռնում, պիրինմ մորթում, օտում ըս: Էքյսի օրը վեզիրը փըռնում ա կնդանը թակում, Կնեղյը ախշարքը կըլոխն ա օնում, հարայ տամ, թա մարթըն ինձ ըսպանեց, թաքավըերեն վըեխնարը մորթալ ա կերալ, հավան տուվալ ա կըլիսեն, փըռնալ ա, ինձ թակում ա: Տրանա ետն էլ քյինամ ա թաքավըերեն ասում, թա մարթըն իստի պին ա ըրալ հերիք չի, հալա կըլիսավն էլ փըռնալ ա ինձ թակալ:

Թաքավըերը վեզիրին ծեն ա տամ կոշտը, ասում.—Վըեր տուիմ տուված վըեխնարը մորթալ ըս կերալ, եկող գլիրեգլի քե կախ ըմ տըլական: Ձառշին քցհնմ ա, ժուղուվուրթեն ծեն տալ տամ, թյանդիրը սապուն քսիլ տամ, վրեր վեզիրին կախ տան, Վեզիրին քըլաքեն մեյզանը պիրիլիս վախտն էլ էն թաղղան հըրուստացած մարթը կյամ ա առաջը կըտրում, թա փողըս տու Վեզիրը թա՛ ա՛ ջանըմ, ինձ հալա տանում ըն կախ տան, թա սաղ պըրծնընմ, ետ կյամ, էն ա փողըտ քե կըտամ, թա կախ կըտան, կա՛խ կըտան, ինձ տանում ըն ըսպանեն, տու լիճա քու փողետ դարդումն ըս: Էտ մարթը թա՛ չէ, վրեր չէ, փողըս տու, պըրծն, նրանա ետք հիշտեղ քյինամ ըս քյինա: Վեզիրը տուն ա օնում տրա հարուր մանեթը տամ, թա՛ էս հալան մին, քեզ էն կըլիսան փուրցեցի:

Վըեր տանում ըն թա կախ տան, Վեզիրը թաքավըերեն ասում ա:—Կըթողըն մինչև քյանդիրը պոկըս քցիլը մին պին ասըեմ: Թաքավըերը թա՛ ասուի: Վեզիրը թա՛ վրեր վրեխնարըտ պիրիմ քեզ տամ, ինձ էլլա կախ կըտա՞ս: Թաքավըերը թա՛ չէ: Վեզիրը թա՛ վրեխնարըտ էն ա էսինչ տըեղը, ինձ էրկու սըհաբ ժամանակ տու, քյինամ պիրիմ:

Թաքավըերը մարթիք ա դարկում, քյինամ ըն վըեխնարը պիրինմ: Վեզիրն ասում ա:—Թաքավըերն ապրած կինա, էս քու վըեխնարըտ ա՞: Թաքավըերը թա՛ հա՛: Վեզիրը թա՛ մեհենգի ես իմ կըլիսեն տարն ըմ, էլ քու քշտիտ ծառայում լըմ: Թաքավըերը թա՛ վրելինչ, կա՛ց, վեզիրը թա՛ չէ:

Վեզիրը թյինանը ա կեդանը ծիյին հաքլվան կապում, քաշ-քաշ անում ըսպանում, տոն-տըեղ ժախում, հղե իննամ քյինամ մին հեռու տըեղ, մին ճըղացում ճըղըսպանեն քշտին հըցըփոր պին անում:

Էտ ճըղասպանը քյինամ ա տոն, վեզիրը տըեղ ճըղասպան ա տըենում, էտ մարթն էլ ամմըն շերտին վերշին կյամ ա շըհագը տանում տոն:

Ժուկ ա անց կենում, ժամանակ ա անց կենում, էտ թաքավը բերեն հրգիրը շատ քյիսըրանում ա: Թաքավը բերը մըտածում ա, թա էս հինչ ըխմըխո՞թում ա, վըեր ևս ըրե, մին վըխնարու դարդա ընդուր մընանե վեզիրը պից թուղեցի: Գյուղո՞մ լի, թա հինչ անըե, վըեր ուրան քյունա վեզիրը քըթենա: Պիրո՞մ ա ամմըն տան մին վըեխնար տամ, ասում.—Հու վըեր կարե էս վըեխնարը հունց պահե, վըեր քաշն իվիլանա վուշ, մին քաղաք ըմ բախշում:

Թաքավը բերը գյուղո՞մ ա, վըեր էտ պինը մենակ ուրան քյունա վեզիրը կըկարե անըե, Պիրո՞մ ա ջառչին քցո՞մ, վըխնըրնեն պիժանում, թա մին տըունան ետը հըվքքըլական ըմ, նորից քըշըռում: Էտ ճըղըցատարն էլ ա քյինամ ուրան վըեխնարը յոր օնում, կյամ վեզիրին կոշտը, թա պա իստի պին կա: Վեզիրը թա՝ վըեղին, վըեխնարը պիր, մին պին կանենքր:

Տա քյինամ ա վըեխնարը պիրո՞մ, վեզիրը թա՝ վըրսկըններեն ասե, թող մին կյուղո՞ւ նոտ փըունեն, պիրին: Տա կյուլին նոտը պիրիլ ա տամ, վեզիրը թա՝ վըեխնարն ան կյուլը ուրո՞ւր անա միւըրե հըուը-հեռու կապե, մըեսը նրա ըորչին տիր, խոտն էլ նրա, մին տարե տահանց իտի պահե, ետնան տար տո թաքավը բերեն:

Տա իտի յէլ անում ա: Մին տըունանը ետը վըեխնարը տանում ա տամ թաքավը բերեն: Թաքավը բերը պիրած վըեխնըրնը քշում ա, տըեսնում լուս իվիլացած, մենակ էտ մինը՝ շէ:

Էտ մարթին թաքավը բերը հըրցնում ա, թա ասը տըեսնամ էս վըեխնարը հու վա պահալ: Տա թա՝ ես: Թաքավը բերը թա՝ շէ, տա քու պինըտ լի, վըեր դուղն ասըես, իմ խոսկ տված քաղաքը տըլական ըմ, վըեր ասես վուշ, տըլական շըմ: Տա թա՝ դե էն ա մին ճըղասպան օնըեմ, նա յա պահալ:

Թաքավը մարթ ա զարկում, վեզիրին պիրիլ տամ, ասում.—Եք քու տըեղըտ ծառայի: Վեզիրը թա՝ կյալ լըմ: Թաքավը բերը թա՝ իրեթ օրավ թաքավը բրոթումը քեզ կըտամ, ե՞թ վեզիրը թա՝ տասսը օրավ ինձ տո, կյամ:

Թաքավը տասսը օրավ թաքավը բրոթումը տամ ա վեզիրին:

Վեղիրը ժուղովուրթին տասսը տըռնավ պեց ա թողում, վըեր թյի-
նան օրիշ երգիրներում ըխշադանք անընն, հըրուստանան, կյան:
Ժուղովուրթը լոին թյինամ ըն ամերլա ուրանց օզած տընդը,
տասսը տարե ըխշադանք անում, կյամ: Երգիրը հըրուստանում
ա, իլլըվում, լըսնըվում: Թաթավըերը վեղիրին անա շատ շընուր-
հակալ ա տընունում, վեղիրն էլ միշտ մնամ ա թաթավըերին քըշ-
տին, ուրան ծառայությունն անում:

